

Միանգամայն մեր բարոյախօս Հարք կը միարանին՝ այդ զեղծմանց աղբիւրը մեր նկատած շուայտութեանց մէջ փնտռելու։ «Յարբեցութենէ (են), կ'ըսէ Եղիշէ, գիջութիւնք պղծութեան» (221)։ Եւ այլուր ասոնց արմատը կը դնէ «ի տենչանս կերակրոց» եւ «յարբեցութիւն անյագութեան» (258)։ Մանգակունին նոյնը կը կրկնէ գեղեցիկ նմանութեամբ մը. «Զորդունս՝ գէջ երկիր պարարէ, եւ զախտս պղծութեան՝ գիջացեալ որովայն» (30)։ Յաճախապատումն համոզուած է՝ թէ որկորի «անժուժկալութեամբ՝» հոգին ու մարմինը կը նեխին «յայլանդակ խորհուրդս եւ յանմաքուր վարս» (80, 85)։ Նարեկացին իւր վերեւ ակնարկած ախտաւորութեանց հետ կը զօդէ անոնց ծանօթ լուցկիքը, «փարթամութիւն, որովայնամոլութիւն, արբեցութիւն» (504)։ Ու Շնորհալին արբեցութիւնը կը համարի «մայր սպանութեան եւ պոռնկութեան եւ ամենայն չարեաց» (Ընդհ. 136)։ Աւելորդ է ըսել՝ թէ նախնեաց այս համոզմունք մերն ալ են, հիմնուած բնախօսիկ ու բարոյախօսիկ սկզբանց վրայ։ Եւ արդէն սեղանին շուրջ տեսանք աղոնց կենդանի ու պերճախօս օրինակները (աստ, 217-21)։ Եթէ շուայտութիւնը «մայր» է ախտից, մեք չպիտի